

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
հանրապետական փուլ
10–րդ դասարան - 120 րոպե

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ե՞րբ է տեղի ունեցել Մայր տաճարի օծումն ու անվանակոչությունը Վաղարշապատում: (0,5 միավոր)
- | | |
|--------------------------|----------------------------|
| 1) 302 թ. հուլիսի 15-ին | 3) 303 թ. օգոստոսի 15-ին |
| 2) 302 թ. օգոստոսի 15-ին | 4) 303 թ. սեպտեմբերի 15-ին |
2. «Գիտությամբ հռչակված այս մարդը Գանձակ քաղաքից էր, քրիստոնյա ծնողների զավակ ...: Ուսումն ավարտելուց հետո նա Կայեն զավատում՝ Աղստն գետի ափին հիմնեց Գետիկի վանքը»: Ո՞ւմ մասին է պատմիչի վկայությունը: (0,5 միավոր)
- | | |
|----------------------|--------------------|
| 1) Մխիթար Գոշ | 3) Վարդան Այգեկցի |
| 2) Կիրակոս Գանձակեցի | 4) Դավիթ Քոբայրեցի |
3. Ե՞րբ Միսր դադարեց Կիլիկիայի հայոց կաթողիկոսական աթոռանիստ լինելուց: (0,5 միավոր)
- | | |
|------------|------------|
| 1) 1915 թ. | 3) 1921 թ. |
| 2) 1918 թ. | 4) 1923 թ. |
4. Ե՞րբ վերահաստատվեց Հայոց եկեղեցու Արցախի թեմը: (0,5 միավոր)
- | | |
|------------|------------|
| 1) 1988 թ. | 3) 1990 թ. |
| 2) 1989 թ. | 4) 1991 թ. |

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. Ըստ ավանդության՝ Գրիգոր Լուսավորիչը մկրտության ժամանակ Տրդատ արքային վերանվանել է՝ _____: (1 միավոր)

6. 1066 թ. Ծամնդավում տեղի ունեցած ժողովում կաթողիկոս է ընտրվում Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամբ, որը պատմության մեջ հայտնի է _____ անունով:
(1 միավոր)

7. 1461 թ. _____ եպիսկոպոսը նշանակվեց Կ.Պոլսի հայոց առաջին պատրիարք:
(1 միավոր)

8. Գևորգ Զ Չորեքյանը վաստակում է _____ պատվանունը, որը դրոշմվում է նրա շիրմաքարին:
(1 միավոր)

№ 9-10

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5-7 փաստից
(2 միավոր)**

9. Եկեղեցու անունը համապատասխանեցնել գտնվելու վայրին. (1 միավոր)

- | | |
|-------------|-----------------------|
| 1. Վանաձոր | ա) Ս. Երրորդություն |
| 2. Դվին | բ) Ս. Առաքելոց |
| 3. Իջևան | գ) Ս. Հակոբ |
| 4. Աշտիշատ | դ) Ս. Գրիգոր Նարեկացի |
| 5. Մարտիրոս | ե) Ս. Գրիգոր |
| 6. Անի | զ) Ս. Վարդան |
| | է) Ս. Ներսես Շնորհալի |

1	
2	
3	
4	
5	
6	

10. Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իրեն ժամանակակից թագավորի անվանը. (1 միավոր)

- | | |
|-------------|-------------------------------|
| 1) Գագիկ Ա | ա) Հակոբ Բ Անավարզեցի |
| 2) Հեթում Բ | բ) Հովհաննես Զ Սսեցի |
| 3) Աշոտ Բ | գ) Կոստանդին Ա Բարձրբերդցի |
| 4) Լևոն Ե | դ) Հովհաննես Ե Դրասխանակերտցի |
| 5) Աշոտ Ա | ե) Գրիգոր Է Անավարզեցի |
| 6) Հեթում Ա | զ) Սարգիս Ա Սևանցի |
| | է) Գևորգ Բ Գառնեցի |

1	
2	
3	
4	
5	
6	

№ 11

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝
յուրաքանչյուրը 5 փաստից**

Հայոց եկեղեցու պատմության մեջ հռչակված կին գործիչների անունները դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

- ա) Աշխեն թագուհի և Խոսրովիդուխտ
- բ) Սանդուխտ
- գ) Կատրամիդե թագուհի
- դ) Սալահունյաց Սիրանույշ իշխանուհի
- ե) Սյունյաց Բյուրեղ իշխանուհի
- զ) Շուշանիկ (Վարդենի)
- է) Սյունյաց Մարիամ իշխանուհի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 12-13

***Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից
(3 միավոր)***

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: (2 միավոր)

«Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»:

1. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը:

2. Ո՞ւմ մասին է խոսքը:

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին: (1 միավոր)

«Առաջինը [.....] մեծահռչակ ուխտն էր Արշարունյաց գավառում, որի առաջնորդ հայր Հովհաննեսը, արևմտյան աշխարհում Քաղկեդոնի մարդադավան աղանդից հալածվելով, եկավ՝ իր հետ բերելով տերունական հրացով նշանը (խաչը): [.....] բնակվելով՝ նրանք առաջնորդվում էին սուրբ Բարսեղ հայրապետի առաքելական հիմք ունեցող սահմանադրությամբ, ըստ որի՝ «նրանց (միաբանների) մոտ ամեն ինչ ընդհանուր է»»:

1. Ո՞ր վանքի մասին է պատմիչի խոսքը:

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ (4 միավոր)

14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: *(0,5 x 2 = 1 միավոր)*

14.1. Անահիտ, Միհր, Վահագն, Նանե, Տիր, Ափրոդիտե, Աստղիկ: *(0,5 միավոր)*

14.2 Միքայել Չամչյան, Գաբրիել Ավետիքյան, Հարություն Շմավոնյան, Ղևոնդ Ալիշան: *(0,5 միավոր)*

15. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 x 3=3 միավոր)*

15.1. *(1 միավոր)*

- ա. Եփրեմ Ա Ձորագեղցի, Հովհաննես Ը Կարբեցի, Ներսես Ե Աշտարակեցի, Գևորգ Ե Տփղիսեցի, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
- բ. Եփրեմ Ա Ձորագեղցի, Հովհաննես Ը Կարբեցի, Ներսես Ե Աշտարակեցի, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի, Մակար Ա Թեղուտցի
- գ. Եփրեմ Ա Ձորագեղցի, Հովհաննես Ը Կարբեցի, Ներսես Ե Աշտարակեցի, Գևորգ Ե Տփղիսեցի, Խորեն Ա Մուրադբեկյան

15.2. *(1 միավոր)*

- ա. Միքայել Ա Սեբաստացի, Ստեփանոս Դ Տղա, Ստեփանոս Ե Սալմաստեցի, Հակոբ Դ Ջուղայեցի, Եղիազար Ա Այնթապցի, Նահապետ Ա Եղեսացի
- բ. Ստեփանոս Ե Սալմաստեցի, Միքայել Ա Սեբաստացի, Ստեփանոս Դ Տղա, Միքայել Ա Սեբաստացի, Աբրահամ Գ Կրետացի, Եսայի Հասան-Ջալալյան
- գ. Միքայել Ա Սեբաստացի, Ստեփանոս Ե Սալմաստեցի, Աբրահամ Գ Կրետացի, Սիմեոն Ա Երևանցի, Ղուկաս Ա Կարնեցի, Հակոբ Դ Ջուղայեցի

15.3. *(1 միավոր)*

- ա. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Եղիշե, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Ղազար Փարպեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի
- բ. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Ղազար Փարպեցի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի
- գ. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ղազար Փարպեցի, Մխիթար Սեբաստացի

*Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից
(0,5 X 4 = 2 միավոր)*

16. ա. Պատմաճարտարապետական ո՞ր հուշարձաններն են պատկերված բ. Նշել դրանցից յուրաքանչյուրի գտնվելու վայրը:



1. ա _____ Բ _____ (0,5 միավոր)
2. ա _____ Բ _____ (0,5 միավոր)
3. ա _____ Բ _____ (0,5 միավոր)
4. ա _____ Բ _____ (0,5 միավոր)

№ 17

Շարադրանք (2 միավոր)

1. Ի՞նչ գիտեք սրբերին նվիրված տոների և պահքի օրերի մասին:
2. Ներկայացրե՛ք Ս. Վրթանես Ա Պարթև կաթողիկոսի գործունեությունը:
3. Հիմնավորե՛ք կաթողիկոսական աթոռի տեղափոխման և Էջմիածնում վերահաստատելու անհրաժեշտությունը:
4. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք «Երկաթե շերեփ»-ի խորհուրդը: